



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հեռ.՝ (+37410) 551364;

Email: info@aarhus.am

Հասցե՝ Չափենց 46

ՆԵՕԿ_14/09

26_05_2014

Երևանի քաղաքապետ պարոն
Տարոն Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան

Երևանի Օրհուս կենտրոնը 30.04.2014 ՆՕԿ_14/08 գրությամբ դիմել էր Երևանի քաղաքապետարան և խնդրել էր տեղեկատվություն Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ազատության պող. հ.2/2 հասցեում «Գոլդեն Փելիս» հյուրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքի կառուցման համար տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, քաղաքաշինական փորձաքննության եզրակացության և շինարարական թույլտվության պատճենները ստանալու, ինչպես նաև այդ տարածքում շինարարության հետևանքով հատված ծառերի քանակի, ծառատեսակների և հատման թույլտվությունների մասին:

Երևանի քաղաքապետարանի Աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետը՝ 07.05.2014, 18-08/26500 գրությամբ պատասխանել է, որ վերոնշյալ փաստաթղթերի պատճենները կարող ենք ստանալ Երևանի քաղաքապետարանի Աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունից, իսկ ինչ վերաբերվում է հատված ծառերին, ծառատեսակներին և հատման թույլտվություններին, ապա փաստաթղթերի լուսապատճենների տրամադրման ժամանակ կտրամադրվի տեղեկատվություն նաև դրանց վերաբերյալ:

Կենտրոնի աշխատանքային գրաֆիկի ծանրաբեռնվածության պատճառով, չենք կարող օգտվել տեղեկատվություն ստանալու քաղաքապետարանի առաջարկած տարբերակից, ուստի՝ խնդրում եմ պահանջվող տեղեկատվությունը ուղարկել փոստով:

(Պատրաստ ենք վճարել մեզ տրամադրված տեղեկատվության պատճենահանման ծախսերը: Պատճենահանման հնարավոր ծախսերի վճարման համար խնդրում ենք նամակով մեզ տրամադրել քաղաքապետարանի հաշվեհամարը, որին պետք է փոխանցումը կատարվի և պատճենահանման ծախսաչափը՝ սկսած 11-րդ էջից):

Տեղեկատվություն ստանալու հարցմանը, խնդրում եմ պատասխանել ամբողջական և օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Կանխավ շնորհակալություն

Երևանի Օրհուս կենտրոնի

համակարգող

Ս. Այվազյան